«Մոնո օֆիս» սակագնային փաթեթի պայմաններ

1. **«Մոնո օֆիս»-ը** իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատիրական գործունեություն ծավալող ֆիզիկական անձանց համար (այսուհետ՝ Բաժանորդ) նախատեսված GPON տեխնոլոգիայի միջոցով տրամադրվող «Լայնաշերտ ինտերնետ» ծառայության սակագնային փաթեթ է և իր մեջ ներառում է հետևյալ սակագները.
   ա.«Մոնո օֆիս Մարզային»
   բ. «Մոնո օֆիս Ստարտ»
   գ. «Մոնո օֆիս Կոմֆորտ»
   դ. «Մոնո օֆիս Ուլտրա»
   ե. «Մոնո օֆիս Պրեմիում»

   «Մոնո օֆիս» սակագնային փաթեթների յուրաքանչյուր Բաժանորդ ստանում է առավելագույնը 1 հատ ստատիկ IP հասցե առանց վճարի գանձման:
   Բաժանորդագրվելով **«Մոնո օֆիս»** սակագնային փաթեթին 1 տարով՝ Բաժանորդը պարտավորվում է Ծառայության ակտիվացման օրվանից 1 տարի (365 օր) շարունակ օգտվել **«Մոնո օֆիս»** սակագնային փաթեթից:

   Մեկ տարով բաժանորդագրության դեպքում.

   i. Բաժանորդը ստանում է իր սակագնային փաթեթի պայմաններով սահմանված ինտերնետի հիմնական արագության համեմատ 36 տոկոսով ավելի բարձր արագություն պարտադիր տարեկան բաժանորդագրությամբ Ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 տարի (365 օր) շարունակ:
   ii. **«Մոնո օֆիս»** սակագնային փաթեթին բաժանորդագրության դեպքում ծառայությունների մատուցման ժամանակավոր կասեցման կամ վճարումների ուշացման պատճառով ծառայությունների մատուցման կասեցման դեպքում սակագնային փաթեթին բաժանորդագրության ժամկետը երկարում է ծառայությունների մատուցման կասեցված ժամանակահատվածի տևողությամբ, սակայն չի երկարում սույն պայմանների 1.i. կետով տրամադրվող ինտերնետի 36 տոկոսով բարձր արագության տրամադրման ժամկետը:
   iii. Գործող Բաժանորդը, պարտադիր տարեկան բաժանորդագրության պայմանով միանալով **«Մոնո օֆիս»** սակագնային փաթեթի որևէ սակագնի կամ վերակնքելով գործող տարեկան բաժանորդագրությամբ պայմանագիրը **«Մոնո օֆիս»** սակագնային փաթեթի շրջանակում՝ ստանում է սույն պայմանների 1.i. կետով տրամադրվող առավելությունը:
   iv. Եթե Բաժանորդը սույն պայմանների 1.i. կետում նշված կարգով ստացել է 36 տոկոսով բարձր ինտերնետի արագություն և կատարում է սակագնի/սակագնային փաթեթի փոփոխություն (չդադարեցնելով տարեկան բաժանորդագրության պայմանը)՝ անցում կատարելով **«Մոնո օֆիս»** սակագնային փաթեթի մեկ այլ սակագնի, ապա շարունակում է օգտվել 36 տոկոսով բարձր ինտերնետի արագությունից մինչև դրա համար նախկին սակագնային փաթեթով/սակագնով սահմանված վերջնաժամկետի ավարտը, եթե նոր սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարը առնվազն նախկին սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարի չափ է կամ ավելի բարձր ամսավճարով սակագնային փաթեթ է, և անցումը կատարվում է մինչև 36 տոկոսով բարձր արագության տրամադրման գործողության վերջնաժամկետի ավարտը: Յուրաքանչյուր այլ տեսակի սակագնային փաթեթի փոփոխություն կատարելու դեպքում սույն պայմանների 1.i. կետով

տրամադրված 36 տոկոսով բարձր ինտերնետի արագության պայմանը դադարում է գործել նոր սակագնային փաթեթի շրջանակում:

v. **«Մոնո օֆիս»** սակագնային փաթեթին բաժանորդագրության պարտադիր ժամկետը համարվում է ավարտված այն դեպքում, եթե Բաժանորդն օգտվել է մատուցված Ծառայություններից դրանց ակտիվացման օրվանից սկսած առնվազն տասներկու ամիսների (365 օրացուցային օրերի) ընթացքում:

vi. Եթե Բաժանորդը բաժանորդագրվել է **«Մոնո օֆիս»** սակագնային փաթեթին մեկ տարով և դադարեցնում է **«Մոնո օֆիս»** սակագնային փաթեթին բաժանորդագրությունը մինչև սահմանված պարտադիր ժամկետի ավարտը կամ Բաժանորդի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հետևանքով Ծառայությունը մինչև սահմանված ժամկետի ավարտը կասեցվում է Օպերատորի կողմից, ապա Բաժանորդը Օպերատորին վճարում է տուգանք, որը հաշվարկվում է Ծառայության ակտիվացման ամսաթվի դրությամբ ակտիվացված **«Մոնո օֆիս»** սակագնային փաթեթի համար սահմանված պարտադիր գործողության ընթացքում Բաժանորդի կողմից վճարվելիք գումարի (ակտիվացված սակագնային փաթեթի ամսավճար ներառյալ ԱԱՀ*12) և նախքան **«Մոնո օֆիս»** սակագնային փաթեթի դադարեցումը **«Մոնո օֆիս»** սակագնային փաթեթի շրջանակում հաշվեգրված գումարի տարբերության 80%-ի չափով:

vii. «Բաժանորդի փոփոխություն ծառայության» (այսուհետ՝ «Բաժանորդի փոփոխություն ծառայություն») շրջանակում, եթե նախքան Բաժանորդային պայմանագրի լուծումը, Ծառայությունների մատուցման միևնույն հասցեում Օպերատորի կողմից մատուցվող ծառայություններին միանա մեկ այլ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատիրական գործունեություն ծավալող ֆիզիկական անձ՝ բացառապես ստորև նշված պայմանների բավարարմամբ.

- միանալ սակագնի (սակագնային փաթեթի), որի ամսավճարը կլինի առնվազն հավասար կամ ավելի բարձր քան այդ հասցեում Բաժանորդային պայմանագրի շրջանակում մատուցվող Ծառայությունների նախկին սակագնի (սակագնային փաթեթի) ամսավճարը ՝ նախատեսված իրավաբանական կամ անհատ ձեռնարկատիրական գործունեություն ծավալող ֆիզիկական անձանց համար,
- միանալ ծառայություններին պարտադիր տարեկան բաժանորդագրությամբ, որի ժամկետ չի կարող լինել նվազ, քան նախկին Բաժանորդային պայմանագրով նախատեսված պարտադիր տարեկան ժամկետն է,
- միանալ ծառայություններին, եթե լուծման ենթակա Բաժանորդային պայմանագրի շրջանակում տեղադրված սարքավորումները դեռևս ապամոնտաժված չեն:

Չկիրառել սույն պայմանների կետ vi.-ում սահմանված պայմանները՝ սույն կետում նշված պայմանների պահպանման պարագայում: «Բաժանորդի փոփոխություն ծառայության» գինը սահմանել միանվագ 10.000 (տասը հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

2. «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ կողմից մանրածախ շուկայում իրավաբանական անձանց համար նախատեսված «Լայնաշերտ ինտերնետ» ծառայության միացման համար (կախված ծառայության մատուցման հասցեից) Օպերատորի կողմից հնարավոր է միանվագ վճարի կիրառում, որի չափը սահմանվում է «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ գլխավոր տնօրենի պայմաններով:

3. «Մոնո օֆիս» սակագնային փաթեթի Բաժանորդները կարող են օգտվել Անվանափոխության, Հասցեի փոփոխության, Սակագնային փաթեթի փոփոխության, Հաշվի վերծանման, Հեռախոսահամարի փոփոխության, Գեղեցիկ հեռախոսահամարի ընտրության, Ներբնակարանային/ներգրասենյակային տեխնիկական սպասարկման, Սարքի փոխարինման/Wi-Fi ակտիվացման ծառայություններից: